LGR
164

Ֆ/80. Ա.Ֆ

# ԿԷՆՈՆՔ ԳՈՐԾԷԾԷԿԷՆՔ

,ամ ալէք ի փորձոց աշխատասիրութեամբ գահաղլխոյ անդրկովկասեան Միաբանութեան ազարակային և առևտրական տնտեսութեան, Բժշկի Ե. Տէր Զուլկասեանի։

—

Դ. Լոյս ածեալք ի նոյն Միաբանութենէ։

Տ փ խ ի ս։

Դ. Տպարանի Ց. և Դ. Էրզանեանց։

1842

[1999

# ПРАКТИЧЕСКІЯ ИЗЪЯЛА,

*Изолеченныя изъ опытовъ Исправляющимъ должность Предсѣдателя Закавказскаго Общества поощренія сельской и мануфактурной промышленности и торговли, Медико-Хирургомъ П. Теренцовымъ.*

—

Изданіе Общества.

—

Тифлисъ.

Типографіи Я. и Д. Арзановыхъ.

1842

ԼԵՌ

Հրամայեաւ մեծ [illegible]ր աց։

43952-44.հ.

# ՆՈՐԻՆ
# ԲԻԲԼԻԱ ԳԵՐԱՍՏՈՒԹԵԱՆ

Ծայրագոյն Կառավարչի անդրկովկասեան աշխարհաց, Տեառն հետևաղօր Հայոց Կաթողիկոսի և Պատրիարքի Եւգենիոսի Պղեքսանդրեան Գ. Ղևոնդեանի առաջնոյ։

280570-62
164-60
Հ.Ֆ. 170

# ԲԱՐՁՐ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԵԱՆ ՏԷՐ։

Ընդ հովանեաւ Բարձր Գերազանցութեան Տերոյ երջանկացեալ անդրկովկասեան Միութիւնն ազգակցին և առևտրական տնտեսութեան կամելով գործակից լինել բարերար նպատակի Կառավարութեան մերոյ՝ ընդարձակել՝ յաշխարհի յայսմիկ զգարմանումն տարաշխարհիկ բուսոց, յընթացս վերջին երկուց ամացս այսոցիկ ած 'ի լոյս Հայ, Վիր և Տաճիկ լեզուաք զինչ ինչ հատուածս յորակրութեանց Ռուսաց. զվերաբերեալս առ վար և ցան ամերիկեան ծխախոտի, եգիպտական բամբակի և այլն։

Բայց որպէս զի յաջողագոյն ևս ելցէ մեզ հատանիլ 'ի Կառավարութենէ յառաջ եղեալ նպատակի, որ է ծանութ առնել զմեզ ընդ շահաբեր գործածութեան լեզուակ, կնճիթն և շանաձանձ կոչեցեալ բուսոց՝ յանձն առի ես զնոր ինն աշխատասիրութիւն համառօտ՝ պ'ելոյս ածել տպագրութեամբ զյաւէտ գործածական կանոնս յառաջ բերելոյ զնոսա, զոր ահա մատուցանեմ վերընծայեալ մեծահամբաւ անուան Ձերոյ՝ համարձակիմ յուսալ իբր թէ այս դուզնաքեայ վաստակ իմ արժանասցի քաղցր ակնարկութեան Բարձր Կերանցութեան Ձերոյ։

Գահագլուխ անդրկովկասեան Միաբանութեան ազգայնոյն և առևտրական մնտեսութեան, Ռժիշկ Ե. Տէրղուկասեան։

# Գլխակարգութիւնք։

Առաջին յօդուած։ Խրատ լեղակ ցանելոյ և նորանից ներկ հանելոյ։

Երկրորդ յօդ"։ Խրատ քունջութ ցանելոյ և նորա սերմերից ձէթ հանելոյ։

Երրորդ յօդ"։ Խրատ գենագերչակ խոտ ցանելոյ, որ հայերէն տունկ շանաձանձի կոչի, և նորա սերմերից ձէթ հանելոյ։

Յորոնած սուրբին։

# ԽՐԱՏ

Լէղէկ ցանէլոյ և նորանէց էջուչի ներչ հանէլոյ։

## Ի

## Լէղէկ ցանէլն։

Լեղակի խոտն (էնոթիօ, չիվիա) բուսանումէ շատ չերմ և արևադարձի մօտ երկիրներումն. և իւր թանգագին կապոյտ ներկովն՝ որ չուչ կոչի, դարձեալ է մին երևելի առարկայ ներքին ազգային վաճառականութեան Հինուստանինու, Ամերիկու գաւառներումն։ Եգիպտոսի փաշէն, որ մէկ երկարատես և շահախնդիր անձն է, միւս այլ այսպիսի պլտանի բուսոց հետ՝ ցանել տվեց իւր երկրումն մեծ քանակութեամբ և լեղակի խոտ, որով շատ հարստացրեց իւր ներքին վաճառականութիւնն։ Յանկանալով տարածանել այս պատուական և բազմաշահ բուսոյ ցանքն և Կովկասու սարերի այս կողմերումն և այնու հարստացուցանել տեղոյս աւ և տուրն՝ Ալիաբանութիւնն ագարակային տնտեսութեան և վաճառականութեան 1834 թուականիցն սկսել էր զանազան փորձեր առնել լեղակ ցանելոյ, ըստանալով սերմերն մանուֆակտուր և ներքին առևտրութեան Գեբարտամնտիցն։ Այս փորձառութիւնքն երբեմն շատ, և երբեմն փոքր էին յաջողում ներքոյ գրեալ հարկաւոր կանոններն գործ-

ածելոյ կեօրայ. բայց առաւել յաջողութեամբ լեղակի բոյսն ցանելոյ և նորանից ներկ շինելոյ համար, հարկաւոր է վարվիլ այս ներքևի գրած կանոններովս։

1

Լեղակ ցանելոյ հողն՝ պէտք է լինի կաւուղ, չաղ կամ փէչնաց. բայց աւելի լաւ է եթէ լինի աւազախառն սեաւ հող։

2

Ինքսիսն հարկաւոր է, որ լեղակ ցանելոյ տափուն լինեն ջուր գնալոյ արխեր, որ տափն ամենայն կողմից կարողանայ արձակ ջրվել. և աղատ լինի հիւսիսային սառն քամիներից։ Այստ հարկաւոր է իմանալ. թէ Հինդուստանու լեղակի սերմունքն փոքր ինչ կարող են դիմանալ սառն կլիմային. բայց Հնդստանուն՝ ամենևին չէն դիմանում և փուլթոլ փչանումն։ Այն կողմերումն, ուր չէ կարելի շինել արխեր և շատ հրութիւն է լինում՝ հարկաւոր է ընտրել ցածր և նամ տեղարեանք, որ դասիդի ջրելոյ տեղն կարողանան բռնել անձրևքն։

3

Այդպիսի ընտրաց հողոյ վերայ, որ աշունքին հարկաւոր է վարել և գարնանն շուռ տալ և փէչնել պատրաստումն կվաներ որպէս բաղի կանաչեղենների համար, որ հեշտ լինի ջրելն. և ցանումն լեղակի սերմունքն Մարտի 20 իցն մինչև Յունիսի 15 կամ աւելի ուշ, նկատելով եղանա-

կի լաւութեանն։ Լ՝ապա հողն խառնումն և լաւ ջրումն. և ուր որ չկայ ջրելոյ ջուր՝ ցանելն հարկաւոր է անձրևից յառաջ։ Որովհետև լեղակի սերմունքն մանր են և ձեռքով ցանել դժուար է մէկ զմէկին հետի՝ հարկաւոր է յառաջ քան զցանելն խառնել սերմունքն կամ աւազոյ և կամ չոր հողոյ յետ։

Դ

Երրորդ և չորրորդ շաբաթի միջոցումն զկնի ցանելոյն՝ բոյսն բարձրանումէ մինչև 3 կամ 4 և աւելի ևս կրեկ։ և այդ ժամանակումն անխափան հարկաւոր է ալաղ անել քոլ չորս կողմումն բուսեալ անպիտան խոտքն, որ հեշտ կարող են քառացնել լեղակն։ Պէտք է տեսանել, որ եթէ ցանացն շատ սրև է դուրս եկած՝ ալաղ անելոյ ժամանակին քօքահան առնել շատ մանր լեղակի բոյսքն միւս անպիտան խոտոց հետ, ինչպէս որ անուումն քարխանաներումն. իսկ փոքր փորձոց համար՝ տեղափոխելն արանց ուրիշ տեղ, վասն զի քանի սէյրակ լինին ցանաց բոյսքն, այնքան առաւել զուարթանան և հաստանան։

Լէշակի խոպոց հասանելոյ համ ժողովելոյ նշանները։

Երկու կամ երկու և կէս ամսոց հետ զկնի ցանելոյն՝ լոյս են ընկնում կարմիր ծաղկունք նախ և յառաջ բուսոց գլխների վերայ, և ապա փոքր առ փոքր ցածանալով՝ բոլոր գլխի ճիւղերի վերայ, իսկ Սեպտեմբերի վերջումն և կամ աւաւել ուշ՝ համարեա թէ քօքի չորս կողմն։ Լ՝ռաջին սերմունքն

հասանումն Օգոստոսին, միւսքն՝ աւելի ուշ, մին զկնի միոյ կարգաւ. իսկ վերջինքն՝ համարեա թէ չեն հասանում։ Բոլորովին հասաց լեղակի բուսոյ բարձրութիւնն՝ է 2 կամ աւելի կամ. և հաստութիւնն՝ ցուցական մատի չափ։ Լեղակն դուրս գալոյ ժամանակին պէտք է զգոյշ լինել որ չթողնեն նրան ծաղկիլ, և մինչև առաջին ծաղկանց երևիլն՝ իսկոյն հնձել բոյսքն, ինչ ժամանակ կամենումն նոցանից ներկ շինել. որ սովորաբար լինումէ երրորդ ամսումն զկնի ցանելոյն, կամ որ մի և նոյն է Յունիսի 15 ին, եթէ ցանքսն արած է Ապրելի 15 ին. բայց միւս տարվան սերմացուի համար՝ պէտք է թողուլ մին քանի զուարթ բոյսք մինչև աշնան ժամանակն, յոր ժամանակին առ հասարակ հասանումն կտրտաց կամ հնձաց բուսոց սերմունքն։ Սովորաբար շատ տաք կլիմաներումն լեղակի խոտն կարելի է ցանել ամառներեք անգամ. ներկ բահամ բերելոյ աշխատութիւնն թեթևացնելոյ համար. զոր օրինակ. եթէ հարկաւոր լինի ցանել լեղակը երեսուն դեսատին հողոյ վերայ՝ առաջ կարելի է ցանել Ապրելի 10 ից մինչև մինչև 20՝ տասն դեսատին. ապա Ապրելի 20 ից մինչև Մայիսի 20՝ ևս տասն դեսատին. և Մայիսի 20 ից մինչև Յունիսի 20՝ մնացած 10 դեսատինն. այնպէս որ քարխանումն, երբ որ ժողովումն առաջի ցանաց բոյսն՝ կարողանումն աւարտել ներկ շինելն մէկ ամիս կամ 15 օր յառաջ, ապա սկսանումն ժողովել երկրորդ ցանքսի բոյսքն և վերջապէս երրորդինն։

## 2

## Լեզուն կամ ինդիգոյ ասոց բուսոյն ներկն կամ բան շեղուն ելհամ ելելն։

### 1

Ոչոյն ծաղկելեցը յառաջ իւր զոխովն երկու կրեհ քօքեցը վերև հնձումեն. և հացի խուրձերի նման կապած՝ տանումեն քարխաներ ուն, կամ ուր որ պատրաստած են ներկ հանելոյ համար հարկաւոր ամաններն. և այդ խոտերով լըքցնումեն քարի հաւուզներն, եթէ որ քարխանումն չինի։ Հասարակօրէն այդպիսի հաւուզներն շինումեն քարփիչեցը կըրով այնչափ մեծ՝ որ կարողանան ամէն մէկն իւրեանց մէջ տեղակել 50 ից մինչև 100 վեդրայ ջուր. այսինքն՝ 300 թունգի, կամ 50 ից մինչև 100 հատ կապած վերոյ յիշեալ խուրձերեցն. կամ թէ հաւուզն փոխանակ գործ են ածում փայտեայ չաներ, կամ այլ ամաններ եթէ լեղակի քանակութիւնն փոքր է, կամ շինումեն փորձելոյ համար։ Ամաններն, որ գործ են ածում էստուր համար, պարտին լինել հին. վասն զի նոր ամաններումն փորձն միշտ չէ յաջողում և այդ պատճառաւ հին ամանքըն կամ գործածածներն՝ նախապատիւ են նորի վերայ։

### 2

Ապա յետ ծածկելոյ բոլոր հաւուզն կամ չանի բերանն մէկ տափակ տախտակի խուփով, որոյ վերայ հաւասարաչափ ջրխտելոյ համար դնումեն մին քանի ծանր բան, պէտք է ածել խտակ գետի ջուր այնչափ՝ որ բոլոր խոտն վերեվանց ծածկեալ

լենի ջրով գոնէ երկու մատնաչափ. և յետ երկու
կամ երեք օրիցն եղանակին նկատելով ջուրն սկսանի
եռ գալ (թուղպ եղանակին եռ գալն աւելի
շուտ յառաջանայ, քան պարզ աւուրքն)։ Այդ
եռ գալի ժամանակին ջրի երեսին կանգնումէ կապ-
տագոյն փրփուր և ապա բոլոր երեսն ծածկվումէ
բարակ փարտով մուխի կապուտ պղնձանման գու-
նոյ, որոյ վերայ եթէ պինտ փչես՝ երևումեն մուխի
կապուտ աստեղք։

3

Երբ որ այս արտաքին նշաններն պարզ երևին՝
ջուրն պէտք է դուրս թողուլ ուրիշ ամանի մէջն
և խառնել փայտեայ թիով յետ և յառաջ մէկ
կէս սահաթ և աւելի ևս, մինչև որ ներկն սկսանի
բաժանվել ջրիցն. այս ժամանակն իմացվումէ եթէ
վեր առնես մէկ խստակ արծաթեայ դրգալով այն
լեղակախառն ջրիցն և ձեռքով շարժես՝ այն ժա-
մանակն ջուրն կըպըղտորվի և դրգալի տակն կը-
նըստի մուգ դուրդ. և եթէ դրգալի անդադար
ժաժ տալիցն յետոյ այդ տակի դուրդն կամ տա-
կունքն կըփոխվին մանր հատիկներ կամ փոշի
յայնժամ հարկաւոր է դադարել բոլոր խառնե-
լիցն և թողուլ որ ջուրն մէկ կամ երկու ժամ
հանդարտի մինչև ներկն բոլորովին տակն նըստի և
ջրոյ գոյնն կըդառնայ մուգ դեղին։

4

Այդ աւարտելուց հետոյ՝ պէտք է զգուշու-
թեամբ բաց թողնել միայն դատարկ ջուրն տա-
կունքիցն. այդ պատճառաւ ամանի մի կողկումն
շինումեն ծակեր մինն միւսից քաշ. և պնտացնումեն

փայտեայ մեխերով, որք ջուրն բաց թողնելի ժամանակին բաց են անվում։ Թէպէտ երբեմն շուտ ջուրն ներկիցը բաժանելոյ համար՝ ածումն ջրոյ մէջն խառնելով նորա փոքր ինչ իստակ կրի ջուր, կամ ջրով բացած կանանչ գաղ (χωρορον) բայց ամենայն կերպիւ պէտք է հետեւել որ ջածվելն սոքա, և հեռանալ այդպիսի հնարիցն՝ վասն զի անդ՝ ուրբնութիւնն ինքնին կարող է ուղիղ ներգործել՝ ամենայն բռնութիւնն կամ ուժիութիւնն ինաս է։

5

Ջուրն բաց թողնելից յետոյ բոլոր տակի նըստած դուրդն պէտք է դատարկել սրածայր տելոյի տօպրակների մէջը և կախ տալ լաւ տեղումն քամելոյ համար։ Բայց դեռ բոլորովին չը չորացած՝ պէտք է վեր բերել և տոպրակներից ներկն դատարկել տափակ տախտակիցը շինած ղուլթների մէջը. որ շինվումն քարփչի ղալիպների պէս. և որոց պէտք է առաջուց փոքր ինչ լուղքսել, ջլխտել և իստակ դանակով հաւասարացնել. ապա խաչաձև. այսինքն՝ լէնք ու երկանքի վերայ բոլոր երեսի վերայ խազեր անել։

6

Երբ որ ներկն ղալիպների մէջումն բոլորովին կըչորանայ՝ հարկաւոր է հանել նորան և կորատել. ապա դարսել կրկին փայտեայ ղուլթի մէջն և թեթև ծածկել. ուլթն կամ տանն աւուրց մէջը ներկն սկսանի քրտնել, յայնժամ պէտք է հանել նորան և չորացնել կրկին բաց օդումն, կամ դարդի պատրաստաց սարայներումն, լեռ որոյ պատրաստ է լինում լեղակն ծախելոյ համար։ Հեռա-

ւոր քաղաքներն ողորկելոյ համար՝ նրան լաւ պէն
տացնումեն մանր տակառների մէջն. այսինքն՝ պոչ
կեքումն, կամ կարումեն կաշիի մէջն, ինչպէս
անումեն Ղինումաչինու թէի. այսինքն՝ չայի հեան

Յօտ՝՝՝ած էրէրէտ։

# ԽՐԱՏ

Բոնջուն ցանելոյ և նորա սերմերէն հէրն հանելոյ։

## 1

### Բոնջուն ցանելն։

Այդ բոյսն ցանելոյ համար՝ հարկաւոր է փափուկ, պարարտ կամ լաւ փէքինաց հող։ իսկ քան զամենայն ընտիրն՝ սեաւ հողն է, խառն ընդ աւազոյ։ Այն կողմերուն, ուր առաւել չորութիւն է, պէտք է ընտրել այնպիսի տեղիք, որ ծածկեալ լինին սառն քամիներից, ցածր և նամ։ Պարսկաստանուն ցանվուն քունջութն առաւելապէս գետերի և աւունների ափերուն, ուր գարնան ժամանակին ցանքն ծածկվուն ջրով, իսկ Եգիպտոս՝ Նեղոս գետոյ ջրով ծածկեալ եղեռներուն։ Սինս երկրներուն, ուր չկայ պակասութիւն անձրևոց, որպիսի և իցէ տեղոյ դրրութիւնն, յարմարաւոր է քունջութ ցանելոյ, միայն թէ հողն լաւ փէքինած լինի առանց խնայելոյ տարարի աղբն և մի քանի անգամ վարելով կակղած։ Առաջին վարն հարկաւոր է անել վաղ գարնան, կամ աշնան ժամանակին. և երկրորդ վարն՝ փոքր ինչ յառաջ քան զցանելն։ Նախ քան զցանելն՝ պէտք է ջարդել բոլոր հողոյ գնտակներն և փըշացնել անպիտան խոտոց արմատքն։

Յանելոյ ժամանակն սահմանելոյ համար՝ պէտք է իմանալ՝ թէ ցանքսիցն սկսեալ մինչև մեծ մասն պտղոց հասանելն՝ հարկաւորումէ իբր չորս ամիս ժամանակ։ Այս պատճառաւ ամենայն տեղ երկրագործքն ինքեանք պէտք է վարավուրդով իմանան թէ երբ հարկաւոր է ցանել քունջութն, որ ինքեան չտանի նմա ոչ գարնան և ոչ աշնան ցուրտքն։ Հարաւային Ռուսաստանու գաւառներուն կարելի է ցանել Ապրելի սկզբուն, որ տօթերից և չորութիւններից յառաջ կարողանայ ծլել և արմատանալ, իսկ միւս առաւել հիւսիսային գաւառներուն անվտանգ ժամանակն քունջութ ցանելոյ՝ է վերջին կէսն Ապրելի. վասն զի այդ միջոցի ցանացն մինչև Օգոստոսի վերջն բոլորովին հասանումէ։

Քունջութն պէտք է արձակ ցանել. և որովհետև նորա սերմունքն յոյժ մանր են՝ հարկաւոր է ձեռքով աջողակ ցանելոյ համար խառնել աւազոյ կամ չոր հողոյ հետ, ինչպէս որ հասարակօրէն սովորութիւն է ցանել խաշխաշն, կորեկն, խարգալն և այլն։ — Եթէ զամենայնն լաւ է յարատևել ցանքսն մաշինով և կվաներով, որք մէկ ղեռկից մի և կէս ֆութ հեռի լինին։ Եթէ զկնի ծլելոյն՝ ձեռքով ցանած քունջութի բոյսքն յոյժ սըխ լինին՝ պէտք է զաւելորդս քօքահան առնել այնպէս, որ նոցա միջոցներուն մնայ մի միայն գատարկ տեղ մի և կէս ֆութ, որ յոյժ հարկաւոր է լաւ աճելոյ և առատ պտուղ տալոյ համար։ Մի Ռըսի դեսատինի համար հարկաւոր է մի փութ սերմն, կամ եթէ ցանելն յառաջանայ մաշիններով կամ սաժեններով՝ աւելի ևս պակաս։

Քունջութն ցանելուցն զկնի՝ սովորաբար սկսանի

երևիլ տասն կամ տասն և չորս աւուրց միջոցումն. երբեմն ևս աւելի վաղ՝ նկատմամբ եղանակի լաւութեանն և սերմանց նորութեանն։ Քունջութն իբրև մի փութ բարձրանալուցն յետոյ եթէ երևին ցանաց տափուումն այլ զանազան տեսակ խոտք՝ հարկաւոր է այն օտար խոտքն արմատախիլ առնել կամ փոքր. նեղ և բերանն կեռ երկաթեայ պահով. այսինքն՝ կեռիչով, որ հարաւային գաւառներուումն գործ են ածում ձմերուկով կամ այլ կանաչեղինօք ցանաց տափերն փորելոյ համար. և կամ փոքր ձիու գութանով, եթէ ցանքսն յառաջ է տարած ղաւթարներով։ Այդ միջոցումն կարելի է և սրէս դուրս եկած բոյսքն նոսրացնել։

Առաջին քունջութի ծաղկունքն բաղում անգամ երևին մէկ ամսից յետ սերմունքն ծլելուցն զկնի. և որչափ քունջութի բոյսքն բարձրանան, այնչափ առաւել բազմանան և ծաղկունքն զոխերի և ճիւղերի վերայ. ծաղիկքն երևելուց յետոյ մինչև նոցա թափիլն՝ նմանապէս տևէ իբրև մի ամիս, իսկ դոցա թափիլելուցն յետ մինչև պտղոց կատարելապէս հասունանալն՝ հինգ կամ վեց շաբաթ։

Քունջութն ժողովելոյ ժամանակին հարկաւոր է ուշ դնել, որ ժողովելն յառաջանայ իւր ժամանակին, պատճառն որ սերմերի բունեին հասանելուցն յետոյ՝ սկսանին տրուաքիլ և նոցա միջի եղեալ սերմունքն թափիլել։ Այսու աղագաւ անխափան հարկաւոր է որ երբ մեծ մասն բունեերի սկսանի կարմրանալ՝ իսկոյն, առանց սպասելոյ մնացեալների կարմրանալոյն, ըսկսանել ժողովելն, քաջահան առնելով քունջութի բոյսն կանափէ բուսոյ նման, որ յետոյ մէկ քանի օր պէտք է

փրուած պահել յստակ տեղումն, կամ արեգական յանդիման, որ սերմերի բունքն կարողանան հասանելը չորանալ և նոցա միջից թափիլ սերմունքն չըփրչանալ։ Այդ միջոցումն ուշ ծաղիկներից յառաջացաց բունների մի քանիսն՝ համարեա թէ միշտ մնան քաղ. ինչպէս որ շատ անգամ պատահումէ և այլ բուսոց հետն։ բայց այս կորուստն, նը. կատելով քունջութի առատութեանն, ամենևին թուելի չէ լինում տերոջն։

Երբ որ քունջութն բոլորովին չորանայ՝ հարկաւոր է ծեծել հացի բուսոց նման և ծեծելով դուրս հանաց սերմունքն քամի՝ ամ և յստակել հասարակ ձևով։ Ծեծելուցն յետոյ մնացեալ խոտն անպիտան է տալարի ուտելոյ և գործ է ածվում առաւելապէս փայտի տեղ պրելոյ համար, որ անփայտ տեղարէնքումն բաւական օգուտ է բերում։ — Քունջութն բուսանի շատ առատ։ Որա բնութեան յարմարաւոր եղանակումն, պարարտ և լաւ փէթինաց հողումն մէկ փութ սերմն տալիս է 100 փութ կամ աւելի ջարդ յստակ քունջութ. և մէկ փութ սերմիցն հանվումէ համարեա թէ կէս փութ ձէթ։ Այս պատճառաւ ղիցուք թէ՝ հարաւային Ռուսաց գաւառներումն մէկ դեսատին հողն կարող է տալ ջարդ կամ յստակ քունջութ մի միայն 50 փութ. կարելի է հաւաստի լինել թէ մէկ դեսատինն կարող է տալ գոնէ 25 փութ ձէթ։ Եթէ ղիցուք թէ իւր տեղումն ձէթի փութն արժէ 10 ռուբլի, յայտնի կըերևի թէ՝ մէկ դեսատինի վերայ ցանաց քունջութն 250 ռուբլի շահ կըբերի, որ միւս այլ տեսակ ցանքսերիցն դժուար է ըստանալ։

## 2

## ԿՈՆՋՈՒԹԻՆ ՅԵՂԻ ՀՈՆԵԼՆ։

Գլխաւոր մասն քունջութի սերմերի, որոյ համար ցանվումէ այդ բոյսն, է առատ, չաղ ձէթն նորա, որ իւր ախորժ համովն, լաստակ գունովն և պարզութիւնովն ոչ թէ միայն գերազանց է միւս այլ ամենայն սերմերից հանաց ձէթերիցն, այլ և ոչնչով պակաս չէ կէրյիւնի ձէթիցն։ Այս ձէթն հանվումէ հասարակ և հեշտ ձևով, այսինքն՝ սեղմելով սերմունքն, ուստի դուրս է գալիս ձէթ համարեա՛ թէ կիսով չափ սերմերի ծանրութեամբն, շունչ ոչինչ հոտ և որովհետև գոյնն շատ պարզ է՝ ախորժ է յոյժ գործածելոյ պահոց կերակուրներուն, և միւս այլ ձէթերի նման կարելի է գործ ածել կանթեղներուն։ Գերջապէս գլխաւոր արժանաւորութիւնն սորա այն է, որ կարէ մնալ անվնաս իբրև տասն տարի և աւելի ևս, միայն թէ լաւ խստակաց լինի և լաւ տեղումն պահվի, ինչպէս որ բազում անգամ փորձեցին պահել Ժդարխանումն, ուր բերվումէ Պարսկաստանից և Բուխարայից։

Քունջութի բուսոյ չէջն, որ մնումէ ձէթն հանելուց յետոյ, բաւական լաւ խորակ է դառնում՝ տան անասնոց համար, առաւել կովերի, որք ըստ վկայելոյ ասիացի ազգաց, եթէ այն չէջն ուտեն՝ տալիս, են աւելի կաթ և կաթն էլ շատ լաւ է լինում։

Այդ սերմերից ձէթ հանելն ամենևին դըժուար չէ և այնպէս է հանվում, ինչպէս որ սո-



ԵՐԵՎԱՆ ՊԵՏ

վորութիւն է հանել խաշխաշի, սելի, կորեկի և այլ միւս տեսակ ձէթքն, զանազանութիւնն այն է միայն՝ որ քունջութի սերմն աւելի փոքր աշխատանք կուզի, վասն զի կեղևոյ կակղութեան և բարակութեան պատճառաւ՝ հարկաւոր չէ նորան ծեծել և բովել կրակի վերայ միւս սերմերի նման և ամենայն տեղ, ուր որ սացանվումէ, հանվումէ ձէթն սաղ սաղ սերմերիցը, ինչպէս որ ցանեքսեցն ժողոված են լինում։ Ձէթն հանելոյ ժամանակին հարկաւոր է միայն զգուշանալ, որ ձիթահան չարխերն և այլ միւս ամանքն իստակ լինեն և այլ որպիսի և իցէ ձէթ նոցա մէջ պահաց կամ ածաց չլինի, ուստի կախեալ է նորա հաւն, գունոյ իստակութիւնն և այդպէս կըպահպանվի վատ և այլ անախորժ հոտից։

Հանաց քունջութի ձէթն իստակվումէ պարզացնելով և քամելով ուրիշ ամանի մէջ։ Երբէք կամ չորս շաբաթուն ձէթն սառն տեղումն թողնումէ իւր տակումն դուրդ և բոլոր նորա անմաքրութիւնն, կամ թանձրութիւնն նստումէ տակըն։ Թէ ուրիշ ամանի մէջ ածելուց յետոյ՝ շատ իստակ չի երևիլ նա, այն ժամանակն կարելի է էլի մին քանի ժամանակ թողուլ պարզվիլ և ապա կրկին ածել երրորդ ամանի մէջն։ Այդպէս պարզացնելն և մէկ ամանից միւս ամանի մէջ ածելն՝ օգուտ է ոչ թէ միայն ձէթն յստակելոյ համար, այլ և անապակ պահպանելոյ համար։ Ձէթն շուտ պարզացնելոյ և յստակելոյ համար կարելի է ձէթով լիք ամանների մէջն բովաց աղ ձգել։ Բայց աւելի լաւ է որ ձէթն ինքն իրան պարզվի, վասն զի նոր հանածն ունանումէ խոտի համ, որ կարելի է վերցնել երկար ժամանակ պարզացնելովն։

Լ՝սիացւոց աշխարհներումն քունջութի ձէթն թէ պարզացնելոյ և յստակելոյ համար և թէ՛ երկար պահպանելոյ համար՝ գործ են ածում մեծ կալի կուժեր քսան վեդրանոց. այսինքն՝ վաթսուն թունգանոց և աւելի ևս, չոր սարդաքի չունենալոյ համար՝ թաղումն հողոյ մէջն. իսկ եթէ կամին ծախելն՝ սովորաբար ածումն կաշեի թուլուղներումն, ինչպէս բերումն Լ՝ժդարխան Պարսկաստանիցն և Ռուխարայիցն։ Ռուսաստանումն այս ձէթն պարզացնելոյ համար՝ կարելի է գործ ածել կուժերի փոխանակ՝ փայտեայ անօթներ կամ չաներ։ Իսկ մեծ քանակութեամբ պահպանելոյ և ուրիշ տեղ ողորկելոյ համար։ Ցեթէ քունջութն փոքր լինի՝ աւելի լաւ է պահպանել նորան ինչպէս որ փորձաց են, շուշի ամանի միջումն. պատճառն որ Լ՝ժդարխան բերած կաշեի տիկերով ձէթն էլ, որ երբեմն մնումէ ճանապարհումն մինչև երկու ամիս, մեծ տօթերի ժամանակին շատ զայ է լինում. բայց երբ որ կրկին ածումն նորա շուշի ամանների մէջն և թողնումն մնալ քանի մի ժամանակ սարդափումն՝ կրկին լաւանումէ այնպէս, որ երկար կարելի է այնուհետև անվնաս պահել։

# Յուրաքանչիւր

# ԽՐԱՏ

Գենագերչաց խոսք ցանելոյ, որ հայերէն սուրբ լանաճանճի էջէ և նորա սերերիցն ելել հանելոյ։

---

## 1

### Գենագերչաց խոսք, ցանելն։

Բոյսն անուանեալ հասարակ և Ամերիկու գենագերչակ, (տունկ շանաճանճի հասարակ և Ամերիկու) որք զանազանին ի միմեանց միայն իւրեանց արտաքին տեսակաւն՝ բուսանումն ջերմ աշխարհներումն և ներքին վաճառականութեանն մեծ օգուտ է բերում իւր ձեթովն և ինչպէս դեղ գործ է ածվում մեծ քանակութեամբ։ Բազում փորձառութիւնք ցոյց տուան մեզ, թէ որպէս կարելի է այս բոյսն ցանել և բարեխառն կլիմանեռումն։ առաւելապէս Լովկասու այս կողմի աշխարհներումն ուր Երևանայնահանգի մէջն (առաջվան Հայոց գաւառի մէջն) վաղուց սովոր են բնակիչքն ցանել այդ բոյսն փոքր քանակութեամբ, բայց որով հետև չգիտեն նոքա հանել դորանից խմելոյ սպիտանաւոր ձէթ՝ այդ պատճառաւ բոլոր նոցա հանածն գործ է ածվում տընտերումն մոմի տեղ երելոյ համար։ Բայց առաւել յաջողութեամբ այս երկրումն գենագերչակն ցանելոյ և նորանից օգուտ ըստանալոյ համար՝ անխափան հարկաւոր են այս հասարակ կանոնքս։

1

Յետ ընտրելոյ ցանելոյ տեղին, որ պէտք է անընդհատ լինի սև հող ջրելոյ յարմարաւոր, (թէպէտ բոյսս այս կարողէ բուսանիլ և ամենայն տեսակ հողոյ վերայ և առանց ջրելոյ բաւականալով միայն անձրևաց ջրովն,) փերնել նրան լաւ և յետ վարելոյ ամառան վերջումն թողուլ մինչև գարունքն, որ հողն մնալով նամուլթեան տակն՝ կակղանայ և գառնան ժամանակին հեշտ լինի շուռ տալու: Առաջին օրերիցն մինչև վերջին օրերն մարտ ամսոյ եղանակին նայելով՝ պէտք է կրկին անգամ շուռ տալ հողն և կրվալներն պատրաստելուց հետ՝ առաջուց ջերմը ջրումն դրոշաց մէկ կամ երկու օր չոր սերմերն գենագերշակի ցանելուշ դնելով՝ որ սերմերն ցանաց լինին մէկ ամէկից գոնէ երկու կրեհ հեռի և աւելի և ապա բաղով հաւասարել ցանքսի հողն: Բայց փոքր ինչ ցուրտ կշնմաներ ուումն սերմունքն ցանումն յառաջ դասիրի պատրաստաց տաք տեղումն, որ ռուսերեն Парникъ կոչի, առաջին օրերումն մարտ ամսոյ, ուր յետ բարձրանալոյ 2 ից մինչև 8 կրեհ՝ տեղափոխումն արտի մէջն, որպէս որ անուումն թամբաքուի սերմանց հետ:

2

Թէ գարնան անձրևքն սակաւ կըլինեն՝ հարկաւոր է ջրել ցանքսն ամէն երկու կամ երեք օրիցն յետ մէկ անգամ, մինչև որ բոյսն բարձրանայ երեք կամ չորս կրեհ, որ լինուումէ ապրելի վերջումն, կամ մայիսի կէսումն. այն վարավորդով թէ երբ է ցանքսն արած, մարտի 15 ին, թէ ապ-

բելի մինին։ Այդ միջոցումն հարկաւոր է յոյժ մի անգամ եւ լաւ ալաղանել ամէն մին բուսոյ չորս կողմն, Տօքտորան առնելով օտար խոտքն. և ապա եթէ անձրև չկայ՝ միշտ ամէն երկու օրիցը մէկ ջրել։

3

Այս բուսոյ զոխն սովորաբար յուլիս ամսոյ վերջումն բարձրանալով էստեղ մինչև մէկ կազ՝ և հաստանալով միչին մատի չափ՝ սկսանի ծաղկիլ։ և սեպտեմբերի կէսին սերմերն բոլորովին հասանումն այնպէս՝ որ կարելի է ժողովելն, բայց հաստութիւնն և բարձրութիւնն նորա երեք պատկըվումէ։

4

Զևն գենագերչակի սերմերի համարեա թէ ձուանման է. իսկ վերին մակերևոյթն՝ սկզբումն փոքր ինչ կանաչ է լինումս. խալերով. ապա դեղնականաչ գոյն է ստանում և վերջապէս մուգ դեղին, որ ապացուցանումէ թէ սերմերն հասած են։ Սեպտեմբերի կէսին սկսանումէ սերմերի հաւաքելն իւր արտաքին կըճեպովն, թողնըվումն սարայումն չորացնելոյ համար, և յետ չորանալոյն՝ արտաքին կեղևքն ձեռքով դըրորելեն կամ տոպրակի մէջ թափ տալեն՝ վերենթափվում։ Ստակ սերմերն յետ տոպրակի մէջն հաւաքելոյն՝ պահպանումն ամբարների միջումն ծախելոյ համար։ Սերմերն կամ ծախվումն սաղ սաղ, ինչպէս որ թագաւորական բաղեն առնումն ամենայն տարի 20 ից մինչև 30 փութ թիֆլեզու գինուորական հիւանդանոցն և մասնաւոր աբտեքներն, կամ թէ նոցանից հանումն ձէթ և տերերն իրանք ծախումն մեծ շահով։ Որովհետև ոչ մին կենդանի չէ կա-

բողանում ուտել այս բոյսն և հոտի ջահաղիցն փախչումէ նորանից. այդ պատճառաւ գենագերչակով ցանաց տափերն կարելի է թողուլ առանց հասարի, որ եթէ հասար քաշվէր ՝ի հարկէ բաւական խարջ կերթար տէրոջն։ Նմանապէս միաբանութիւնն փորձով իմացաւ և առաջարկումէ ամէն ցանքսերի տէրներին անձամբ փորձել թէ ցորենով, գարիով և այլ ամենայն հացի ընդեղինոք ցանաց տափերն՝ տաւարից և այլ խոտ ուտող կենդանիներից պահպանելոյ համար. որ շատ անգամ թապուններով մնանումեն արտի մէջն և արտն ապականումեն, մանաւանդ այն արտերն՝ որ մեծ ճանապարհների վերայ են լինում, շատ օգտաւէտ կըլինէր և երկպատիկ շահաւէտ՝ եթէ արտի չորս կողմն ցանեն գենագերչակի սերմերն որ յետ մեծանալոյն՝ մէկ կողմեցը կըարգելէին վերոյ լիշեալ կենդանիներին փըչացնել արտերն և կըլինէին արտորէից տէրանց համար, որպէս թէ հաւատարիմ և արժուն պահապանք. միւս կողմիցն մեծ օգուտ կըբերէին իւրեանց սերմերովն։

## 2

## ԹԷ ԻՆՉՊԷՍ ԷՍՆԼՈՒ ՅԷՐԼԷՆ ԳԷՆԱԳԷՐՉԱԿԻ ՍԵՐՄԷՐԸ։

Շատ փորձեր արեցին գենագերչակի սերմից լաւ ձէթ հանելոյ համար, ոմանք այս ինչ և ոմանք այն ինչ մասունքներիցն նորա կամեցան հանել ձէթ, բայց թէ սոքա և թէ նոքա չկարացին հասանել իւրեանց նպատակին։ Մեր ժամանակումն սովորութիւն եղև հետևել այս երկու հնարաց։

## Առաջին եղանակ հնարք գենագերչակից յելի հանելոյ։

Գենագերչակի սերմունքն իւրեանց կեղև, ներոքն թակուումն չուգունի հաւանկուումն այնքան՝ մինչև որ խմորի պէս դառնայ, և ձեռք տալի ժամանակին էլ սաղ սերմերի նշոյլ չի երևի. ապա պէտք է փոքր ինչ տաքացնել և փոքր առ փոքր դնել հաստ քաթանի մէջ, որ հաստարակօրէն դընուումն երկու տաքացրաց և կլէկաց պղնձի ասխտակների մէջն և քամուումն ձէթն որչափ որ կարելին է. բայց որովհետև այս ձևով հանվումէ մէկ փսրթ սերմերիցն 13 ից սկսեալ, մինչև 15 ֆունթ ձէթ և այն ձէթին էլ ունանուումէ մուք գոյն, զոր չէ կարելի բառնալ և երկար ժամանակեայ պարզացնելոյն տաք տեղումն՝ այդ պատճառաւ անխափան հարկաւոր է քամել նորան թղթի մէջն տաք տեղումն։ Այս ձև ձէթ հանելն գործ է ածվումէ Օստինդիուումն. այսինքն. արևմտեան հնդստանայ երկիրներումն։

## Երրորդ եղանակ գենագերչակից յելի հանելոյ։

Սերմերն թակուումն և եռեն տալիս մինչև 6 սահաթ շատ ջրի մէջն և ժողովումեն ձէթն, որ կանգնուումէ ջրի երեսումն սպիտակ փրփուրի նման։ Այս փրփուրն թանձրացնելոյ և նորանից թացուլթիւնն ջոկելոյ համար՝ պէտք է նրան թեթև տաքացնել և քամել պինտ քաթանումն։ Քամաց հեղանիւթն պէտք է երրորդ անգամ տաքացնել մնացեալ թացուլթիւնն բաժանելոյ համար։ Երբ որ կըհասանի ժամանակն ձէթի թացուլթիւնն բոլորովին բաժանվելոյ՝ յայնժամ ձէթն կըստանայ ախորժ համ. և համարեա լեռ ոչ ինչ

գոյն չի ունենայ։ Իսկ եթէ այդպէս չանվի՝ կունենայ կծու համ և գոյնն էլ խաւար, պղտոր կը լինի։ Այս ձև ձէթ հանելն գործ է սովորում Մերիկոյ մէջն։ Լաւ պատրաստաց ձէթն թանձր է, պարզ, դեղին՝ կամ համարեա թէ անգոյն, համն քաղցր, բայց փոքր ինչ կծու, որ փուխով համ տեսանելից հետն անցանումէ։ Այլ ձէթերիցն ջոկնվումէ հնդուրով՝ որ նա բոլորովին բացվումէ թունդ արաղի մէջումն. ինչ ժամանակ միւս ձէթքն կամ բոլորովին չեն բացվում, կամ թէ բացվումն շատ սակաւ։ Նպատակն է գենակերշակի ձէթն, եթէ դեղին գոյնն նորա անցանէ ի կարմիր. համն շատ կծու է լինում, ինչպես է տալիս ստամոքսին և փորոտեացն։ Ոմանք հաւատացնումեն թէ այս ձէթն եռ տալիցն կորուսանումէ իւր կծուութիւնն, որ յառաջ է գալիս վատ պատրաստելիցն նորա։ բայց եռ տալքն՝ ոչ ինչ օգուտ չի բերիլ, եթէ նորա կծուութիւնն յառաջացաց լինի ձէթի հնութիւնից։